ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 01.06.2016թ. N 1/29-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.06.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հովսեփյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ն.Մնոյանը, Լ.Հարությունյանը, Ա.Եղիազարյանը, Ա.Աբամյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և ուսումնասիրության մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Արարատյան փող. 62/4ա)
2. «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ն (Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մարգարայի խճուղի, 1/1)
3. «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Այգեստանի 10-րդ փող, տուն 53)

-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով՝ բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 14.06.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի, «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ի և «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի և «Իմպերիալ-Տուր» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը:
«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը, սակայն բացակայում է ֆինանսական չափորոշիչը՝ Հավելված N 4-ը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	
		«Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ	«Իմպերիալ-Տուր» ՍՊԸ
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	70016289	93062400

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

-Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակիցը հայտով ներկայացված հայտի ապահովման՝ վճարման պահանջագրի համարակալման դիմաց նշել է համար և «փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները» տողում կատարել է գրառում, սակայն ՀՀ ֆինանսների նախարարի 05.05.2016թ. թիվ 54-Ա հրամանով հաստատված «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու» մասին հրամանի պահանջների համաձայն 1-ին և 16-րդ կետերը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս:

Հաշվի առնելով, վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը կասեցնել և տվյալ գնման ընթացակարգի հետագա ընթացքը ապահովելու համար պարզաբանման նպատակով գրությամբ/կցվում է/ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությանը:

-ՊԵԿ-ԲԸՀ-ԱՇՁԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը վերսկսել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից պատասխան գրությունը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հովսեփյան

Անդամներ՝ Ն.Մնոյան

Լ.Հարությունյան

Ա.Եղիազարյան

Ա.Աբամյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան